# ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | ՀՕ-477-Ն |
| Տիպ | Օրենք |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (25.12.2025-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2025.12.22-2026.01.04<br>Պաշտոնական հրապարակման օրը 24.12.2025 |
| Ընդունող մարմին | ՀՀ Ազգային ժողով |
| Ընդունման ամսաթիվ | 17.12.2025 |
| Ստորագրող մարմին | ՀՀ Նախագահ |
| Ստորագրման ամսաթիվ | 24.12.2025 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 25.12.2025 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

# Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2025 թվականի դեկտեմբերի 17-ին**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետի «1500 դրամ», «3000 դրամ», «5500 դրամ», «8500 դրամ» բառերը փոխարինել «1000 դրամ» բառերով.

2) 2-րդ կետի «18000 դրամ», «24000 դրամ», «48000 դրամ» բառերը փոխարինել «12000 դրամ» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տարվա հունվարի 1-ից, բացառությամբ 200 001 Հայաստանի Հանրապետության դրամ և ավել աշխատավարձ ստացող վարձու աշխատողների, որոնց համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**Հանրապետության նախագահ** **Վ. Խաչատուրյան**

2025 թ. դեկտեմբերի 24
Երևան
ՀՕ-477-Ն

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 24 դեկտեմբերի 2025 թվական:**